ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԼԵՆ ՅՈՒՐԻԻ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Յու.Վ.Յուզբաշյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Ս.Ներսիսյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր Ա.Ս. Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան **պետական մանկավարժական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. մայիսի 2-ին ժամը 14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2013թ. ապրիլի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա.Վ.Ավագյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ մարդկությանը ոչ միայն նյութական և հոգևոր արժեքներ է թողնում, այլև կերտում է որոշակիորեն ձևավորված անձ, որն այդ մշակույթի ստեղծողն է և միաժամանակ արդյունքը:

Անձի երաժշտական մշակույթը նրա ներդաշնակ զարգացման կարևոր պայմանն է: Երաժշտությունը արվեստի այն առանձնահատուկ տեսակն է, որում ամփոփված են մարդկության իմացական, հուզական, գեղագիտական լիցքերը, մեղեդու ռիթմի ու ներդաշնակության մեջ խտացած է ժողովրդի հոգևոր մշակույթի ողջ գունագեղ երանգապնակը: Երաժշտությունը հուզում է մարդուն, նրա հոգում հարուցում ամենատարբեր հույզերի ու զգացմունքների անսահման բազմազանություն: Երաժշտական կերպարն ամբողջովին հյուսված է մարդկային զգացմունքներից ու ապրումներից:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է անձի երաժշտական դաստիարակության բնագավառում առկա խնդիրների վերանայման անհրաժեշտությամբ: Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման խնդիրը արդի ժամանակահատվածում տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում առաջնային նշանակություն է ձեռք բերում:

Անձի գեղագիտական դաստիարակության շրջանակներում երաժշտական մշակույթի զարգացման խնդիրը դիտարկել են մանկավարժներ Կ.Դ. Ուշինսկին, Ա.Ս. Մակարենկոն, Վ.Ա. Սուխոմլինսկին. Բ.Տ. Լիխաչյովը, Դ. Աղայանը. Հ. Հինդլյանը: Անձի երաժշտական մշակույթի զարգացման հարցերը խորապես ուսումնասիրվել են մանկավարժներ և երաժշտագետներ Դ.Բ. Կաբալևսկու, Օ.Ա. Ապրակսինայի, Լ.Վ.Շկոլյարի, Վ.Ա.Շկոլյարի, Է.Բ.Աբդուլինի, Մ.Ս. Մազմանյանի, Կոմիտասի, Ս.Ա. Մելիքյանի, Յու.Վ. Յուզբաշյանի կողմից: Մեր հետազոտության համար հատկապես կարևորվում է այն, որ այդ ուսումնասիրություններում մշակվել է կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակության բովանդակությունը, բացահայտվել են տարրական դպրոցում երաժշտական-գեղագիտական դաստիարակության թե՛ տեսական, և թե՛ գործնական կողմերը, ձևերն ու մեթոդները, որոնցում շեշտվում է կրտսեր դպրոցականի անձի գեղագիտական-երաժշտական դաստիարակության կարևորությունը:

Վերջին տարիներին կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման արդյունավետ ուղիների բացահայտմանն ուղղված հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ երաժշտության ուսուցման արդի մեթոդները՝ իրենց տեսական և գործնական նշանակությամբ, արտացոլում են քննարկվող հիմնախնդրի տարբեր տեսանկյուններ՝ հիմնականում կապված ուսուցման ձևերի, միջոցների, մեթոդների մշակման և ներդրման հետ:

Հետազոտության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է տարրական կրթության համակարգին առաջադրվող պահանջների և այդ

համակարգում առկա իրավիճակի միջև էական հակասություններով, որոնք արտահայտվում են՝

- ժողովրդի մանկավարժական ավանդույթների, պատմամշակութային ժառանգության տեսական իմաստավորման անհրաժեշտությամբ և նրա նկատմամբ դպրոցի և ընտանիքի կողմից հաճախ նկատվող հետաքրքրության անկմամբ,
- էթնոմանկավարժության ժառանգության վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մշակութաբանական ուսումնասիրությունների լայն ընդգրկմամբ և տարրական կրթության համակարգում այդ ուսումնասիրություններում առկա մոտեցումների ոչ բավարար մեթոդական մշակմամբ,
- ժողովրդական երաժշտության՝ որպես կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի ձևավորման միջոցի լայն հնարավորությունների և դրա կիրառման տեսական ու գործնական ոչ բավարար մշակվածությամբ:

Վերը նշված հակասությունների բացահայտումն ու դրանց հաղթահարման ուղիների որոնումն էլ պայմանավորեց մեր հետազոտության թեմայի ընտրությունը՝ **«Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու մանկավարժական պայմանները»:**

<u>Հետազոտության նպատակն</u> է բացահայտել կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման տեսական-մեթոդական հիմունքները և հիմնավորել դրա իրականացման մանկավարժական պայմանները:

<u>Հետազոտության օբյեկտը</u> կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացմանը նպաստող մանկավարժական պայմանների ամբողջությունն է:

<u>Հետազոտության վարկածն</u> այն է, որ կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացումն արդյունավետ կիրականանա, եթե՝

1. տարրական դպրոցում ստեղծվի գեղագիտական-ստեղծագործական դաստիարակչական միջավայր, որն իր բովանդակության մեջ ներառում է երաժշտական մշակույթի բաղադրատարրեր՝ երաժշտական գործունեություն, երաժշտական մտածողություն, երաժշտական ընդունակություններ և երաժշտական-գեղագիտական գիտակցություն՝ հիմնված մարդասիրական, մշակութաբանական, էթնոմանկավարժական, անձնակողմնորոշիչ, գործունային մոտեցումների, ուսուցման ու դաստիարակության ակտիվ ձևերի ու մեթոդների վրա,

2. մշակվի և գիտափորձով հաստատվի կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման՝ երեք փուլեր ներառող տեխնոլոգիա (նախապատրաստական, բովանդակային-գործունային, ամփոփող-գնահատողական)՝ հիմնված ժողովրդայնության, կյանքի և երաժշտության, մարդու և բնության միջև կապի, գեղագիտության, հուզականության սկզբունքների վրա. որն ապահովում է կրտսեր դպրոցականների՝ երաժշտության նկատմամբ հուզական-գնահատողական վերաբերմունքի ձևավորումը՝ հուզական ընկալումից մինչև հուզական-իմացական,

ճանաչողական-ստեղծագործական ընկալում և գնահատում,

3. սերտ համագործակցություն ձևավորվի տարրական դպրոցի, ընտանիքի և արտադպրոցական հաստատությունների միջև կրտսեր դպրոցականների երաժշտական ճաշակի ձևավորման, ժողովրդի երաժշտական ավանդույթների միջոցով նրանց հուզական ոլորտի հարստացման համար, որը խթանում է նրանց երաժշտական մշակույթի ձևավորումը:

Առաջադրված նպատակի և վարկածի համապատասխան՝ առաջադրվել են հետազոտության խնդիրները.

1. Բացահայտել ելակետային այն դրույթների ամբողջությունը, որոնք կազմում են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի տեսական-մեթոդաբանական հիմքը:

2. Բացահայտել և գիտափորձով հիմնավորել կրտսեր դպրոցականների՝ ժողովրդի երաժշտական ավանդույթների վրա հիմնված երաժշտական մշակույթի զարգացման արդյունավետ ձևերի, միջոցների, եղանակների ու մեթոդների համակարգը:

3. Առաջադրել կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մոդելը, որոշել երաժշտական մշակույթի զարգացման մակարդակները, չափանիշները:

4. Մշակել և գիտափորձով հիմնավորել կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մանկավարժական պայմանների համալիրը:

<u>Հետազոտության մեթոդաբանական հիմք</u> են հանդիսացել փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում դիտարկված այն հիմնական դրույթները, որոնք ներառում են անձի երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի իրականացմանն ուղղված մոտեցումները, մշակութաբանական և մանկավարժական հետազոտությունները, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում ընդհանուր և երաժշտական մշակույթի, ազգային-մշակութային արժեքների վերահիմաստավորման և անձի հոգևոր զարգացման գործում դրանց ունեցած դերի մասին հայեցակարգերը:

<u>Հետազոտության տեսական հիմք</u> են հանդիսացել անձի երաժշտական մշակույթի դաստիարակության՝ որպես գեղագիտական մշակույթի զարգացման բաղադրատարրի, երաժշտական մշակույթի ձևավորման և հոգևոր զարգացման փոխադարձ կապի մասին գաղափարները, երաժշտական ուսուցման ու դաստիարակության տեսությունները, երաժշտական հոգեբանության հայեցակարգերը, կրտսեր դպրոցականների ուսուցման ու դաստիարակության էթնոմանկավարժական տեսությունները:

<u>Հետազոտության մեթոդները</u>: Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝ հետազոտության հիմնախնդրի շուրջ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մշակութաբանական գրականության տեսական վերլուծություն, ժողովրդական բանահյուսության վերլուծություն, մանկավարժական գիտափորձ, անկետավորում, հարցազրույց, զրույց, դիտում, թեստավորում, տարրական դպրոցի ուսումնական ծրագրերի և երաժշտության դասագրքերի ուսումնասիրում: Կիրառվել են նաև կրտսեր

դպրոցականների ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծության, տարրական դպրոցի երաժշտության ուսուցիչների մանկավարժական փորձի ուսումնասիրման և ընդհանրացման մեթոդները:

Հետազոտության **գիտական նորույթն է.**

1.Բացահայտվել և գիտափորձով հիմնավորվել է կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման արդյունավետ ձևերի, մեթոդների, միջոցների, ուղիների համակարգը, որը հիմնված է ժողովրդի երաժշտական ավանդույթների մարդասիրական գաղափարների, կյանքի և երաժշտության կապի, բնության հետ ներդաշնակության, դիտողականության, հուզականության, աշխարհի գեղագիտական ընկալման վրա:

2. Առաջարկվել է կրտսեր դպոցականների երաժշտական մշակույթի զարգացման մոդելը, որը ներառում է երաժշտական մշակույթի զարգացման երեք փուլ՝ նախապատրաստական, բովանդակային-գործունային և գնահատողական:

3. Սահմանվել են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մակարդակները և չափանիշները:

4. Մշակվել և գիտափորձով հաստատվել է կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանների համալիրը:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ , դիտարկվել են հետազոտող խնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մշակութաբանական մոտեցումները, մշակվել են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման հայեցակարգային հիմքերը, տեսական մոդելը: Տեսականորեն հիմնավորվել և գիտափորձով հաստատվել է կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործում ժողովրդական մանկավարժության և բանահյուսության կիրառման անհրաժեշտությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը. կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման՝ մեր կողմից առաջարկված միջոցների, մեթոդների, ուղիների համակարգը, ախտորոշիչ նյութերը, ժողովրդի երաժշտական ավանդույթների օգտագործման վերաբերյալ մեթոդական հանձնարարականները տարրական դպրոցի մանկավարժների կողմից կարող են կիրառվել ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել նաև մանկավարժական բուհի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում՝ որպես հատուկ դասընթացներ, երաժշտություն դասավանդողների որակավորման և վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև արտադպրոցական հաստատություններում և ընտանեկան դաստիարակության պրակտիկայում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովվում է հիմնախնդրի գիտատեսական և մեթոդաբանական վերլուծությամբ, գիտափորձի կազմակերպման ընթացքում հետազոտության խնդիրներին, նպատակներին, օբյեկտին և առարկային համարժեք համալիր մեթոդների կիրառությամբ, ինչպես նաև ստացված արդյունքների մաթեմատիկական ու

վիճակագրական վերլուծությամբ:

<u>Հետազոտության փորձաքննությունը և արդյունքների ներդնումը:</u> Հետազոտության հիմնական տեսական դրույթները և արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում, ամփոփված են թեմայի վերաբերյալ տպագրված գիտական հոդվածներում: Հետազոտության արդյունքները ներդրվել են հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում գիտափորձի աշխատանքների ընթացքում:

Հետազոտության բազան են հանդիսացել Երևանի թիվ 1, 6, 47, 114 հանրակրթական դպրոցները:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլերով.

Առաջին փուլում (2005-2006թթ) ուսումնասիրվել և տեսական վերլուծության է ենթարկվել հետազոտության թեմայի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մշակութաբանական, բանահյուսական գրականությունը, ուսումնասիրվել և դիտարկվել են տարրական դպրոցում հիմնախնդրի արդի վիճակի վերաբերյալ հետազոտությունները, մեթոդներ են մշակվել հաստատող գիտափորձի կազմակերպման համար:

Երկրորդ փուլը (2007-2008թթ) նվիրվել է ձևավորող գիտափորձին: Հարցումների, զրույցի, դիտումների ընթացքում ուսումնասիրվել են տարրական դպրոցում դասավանդվող առարկաների գեղագիտական բնույթը, երաժշտական մշակույթի ձևավորմանը նպաստող գործոնները, որոշվել է սկզբունքների, մոտեցումների, ձևերի ու մեթոդների արդյունավետությունը: Ճշգրտվել են մանկավարժական այն պայմանները, որոնք ապահովում են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացումը:

Երրորդ փուլում (2009-20010թթ.) համակարգվել և ընդհանրացվել են հետազոտված տեսական նյութի և գիտափորձի արդյունքները: Արվել են համապատասխան եզրակացություններ, մեթոդական հանձնարարականներ են մշակվել տարրական դպրոցում երաժշտության դասավանդողների ղեկավարների ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպման համար:

<u>Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.</u>

1. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթը անձնային ամբողջական հատկանիշ է, որի բովանդակությունը կազմում է երաժշտության նկատմամբ գիտակցված արժեքային վերաբերմունքը: Այն դրսևորվում է երաժշտության վեհության և գեղեցկության ընկալմամբ, բարձրարժեք երաժշտություն լսելու պահանջմունքով և երաժշտական ստեղծագործության գնահատման ունակությամբ: Անձի երաժշտական մշակույթի զարգացումը նրա հոգևոր մշակույթի ձևավորման նախադրյալն է:

2. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման տեխնոլոգիաները հիմնվում են ժողովրդի երաժշտական ավանդույթների, բնության հետ ներդաշնակության, կյանքի և երաժշտության կապի, աշխարհի գեղագիտական, հուզական ընկալման, դիտողունակության սկզբունքների վրա և ներառում են հետևյալ չորս բաղադրատարրերը՝ երաժշտական գործունեություն, երաժշտական մտածողություն, երաժշտական

ընդունակություններ և երաժշտական-գեղագիտական գիտակցություն: Այդ գործընթացն իրականանում է երեք փուլերով՝ նախապատրաստական, բովանդակային-գործունային և գնահատողական, որոնք ապահովում են կրտսեր դպրոցականների կողմից երաժշտության, հուզական-գնահատողական վերաբերմունքի ձևավորումը՝ հուզական գնահատումից մինչև հուզական-իմացական և ճանաչողական ստեղծագործական գնահատում:

3. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովում են մանկավարժական հետևյալ պայմանները՝ կրտսեր դպրոցականների հաղորդակցումը ազգային երաժշտական ավանդույթներին, որոնցում ներդաշնակորեն համադրվում են բանաստեղծական խոսքը, բովանդակությունը և պարը, ստեղծագործական և գեղագիտական դաստիարակչական այնպիսի միջավայրի ստեղծումը, որն իր բովանդակության մեջ ներառում է երաժշտական մշակույթի բաղադրատարրեր, մարդասիրական, մշակութաբանական, էթնոմանկավարժական, անձնակենտրոն մոտեցումները, ուսուցման և դաստիարակության ակտիվ ձևերն ու միջոցները, դպրոցի, արտադպրոցական հաստատությունների և ընտանիքի համատեղ գործունեությունը, որն ուղղված է կրտսեր դպրոցականների երաժշտական ճաշակի ձևավորմանը, հուզական ոլորտի հարստացմանը, երաժշտական մշակույթի զարգացմանը:

<u>Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:</u> Ատենախոսության ծալավը կազմում է 134 համակարգչային էջ: Այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը պարունակում է ինը աղյուսակ և յոթ գծանկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման տեսական-մեթոդական հիմունքները»** խորագիրը կրող **առաջին գլուխը** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Անձի երաժշտական մշակութի ձևավորման և զարգացման հիմնախնդրի փիլիսոփայական հիմնավորումը» ենթագլխում դիտարկված են անձի երաժշտական մշակութի ձևավորման և զարգացման վերաբերյալ հիմնախնդրի փիլիսոփայական մոտեցումների վերլուծությունը:

Դիտարկված են «մշակույթ», «երաժշտական մշակույթ» «գեղագիտական գիտակցություն», «գեղագիտական զգացմունք», «գեղագիտական պահանջմունք», «գեղագիտական ճաշակ», «գեղագիտական

իդեալ» հասկացությունների տարբեր սահմանումներ և ձևակերպումներ: Նշվում է, որ մշակույթի՝ նյութականի և հոգևորի ավանդական տարբերակումը հետազոտողների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում. այն, ինչ ոմանք անպայման վերագրում են նյութական մշակույթին, մյուսները դիտում են դրա սահմաններից դուրս:

Հիմնավորվում է, որ «Գեղագիտական մշակույթ» և «գեղարվեստական մշակույթ» հասկացությունները նույնական չեն: Դրանք մշակույթի ընդհանուր կառուցվածքում տարբեր կարգավիճակ ու ծավալ ունեն: Գեղարվեստական մշակույթը թափանցում է մարդու կյանքի, վարքի, գործունեության բոլոր ոլորտները՝ թե՛ նյութական և թե՛ հոգևոր: Ընդգծվում է, որ անձի երաժշտական մշակույթը բնութագրելու համար պետք է սահմանել այն մակարդակները, որոնք անհրաժեշտ են անձի երաժշտական-գեղագիտական պահանջ-մունքները բավարարելու համար: Գեղագիտական պահանջմունքներն ու ունակությունները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով և գտնվում են սերտ միասնության մեջ:

«Երաժշտական մշակույթ» հասկացությունը առօրեական ըմբռնումներում և կենցաղային գիտակցության մեջ հաճախ նույնացվում է «երաժշտություն» հասկացությանը, թեև երաժշտական մշակույթը նշանակալիորեն լայն է երաժշտական ստեղծագործությունների ամբողջականությունից:

Երաժշտական մշակույթի հիմնական առանձնահատկությունը նրա հոգևոր բնույթն է, որը թույլ է տալիս երաժշտական մշակույթը դիտարկել որպես հոգևոր մշակույթի բաղադրիչ: Երաժշտական մշակույթի բաղադրատարրերն են երաժշտաան գործունեության տարբեր կողմեր՝ ընկալումը, կատարումը, ստեղծագործումը, մշակութային հաստատությունները, երաժշտական գործունեության սուբյեկտները: Տարբերում են նաև երաժշտական մշակույթի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը:

Անձի՝ ազգային երաժշտական ավանդույթների վրա հիմնված երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդրի ուսումնասիրության գործում կարևորվում է երաժշտական մշակույթի տեսակների սերնդեսերունդ փոխանցման, ժառանգորդության գաղափարը: Մշակույթի յուրաքանչյուր նոր տեսակ հիմնվում է նախորդի արժեքային ավանդույթների վրա, պահպանում՝ հարստացնելով ու նորովի զարգացնելով նորաստեղծ արժեքները:

Երաժշտական մշակույթը՝ որպես հոգևոր ստեղծագործության բնագավառ, առանձին անհատների ստեղծագործական գործունեության անկրկնելի արդյունք է, որը և երաժշտական մշակույթը վերածում է բացառիկ արժեքների արտահայտության: Դա այնպիսի համակարգ է, որը բնորոշվում է երաժշտական յուրահատուկ լեզվով և աշխարհընկալմամբ:

Դիտարկված են անձի երաժշտական մշակույթի ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները:

Ելնելով անձի երաժշտական մշակույթի զարգացման խնդրի փիլիսոփայական վերլուծությունից՝ եզրակացվել է, որ երաժշտական մշակույթը՝ որն ամբողջական համակարգ է, ներառում է հասարակության երաժշտական արժեքները, երաժշտական գործունեության բոլոր ձևերը, սուբյեկտները, մշակութային հաստատությունները, երաժշտական գործիքներն

ու տեխնիկական սարքավորումները, որոնք սպասարկում են այդ գործունեությանը:

Անձի երաժշտական մշակույթը մեր կողմից ըմբռնվում է որպես անձի գեղագիտական զարգացած գիտակցության և կենսագործունեության բազմազան ձերում նրա գիտական ու ստեղծագործական ունակությունների օրգանական միասնություն: Տարբերակում ենք գեղագիտական զգացումներ (գեղագիտական ընկալում, հույզեր, ապրումներ, զգացմունքներ, գեղագիտական ճաշակ) և գեղագիտական իմացություն (գեղագիտական ճաշակի դրսևորում, գեղագիտական իդեալ, սկզբունքներ, համոզմունքներ, պահանջմունքներ) հասկացությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «**Կրտսեր տարիքի դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացումը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր**» դիտարկվել են երաժշտական մշակույթի զարգացման սոցիալ-մանկավարժական տեսանկյունները:

Ներկայացված և բնութագրված են երաժշտական մշակույթի հիմնական բաղադրատարրերը՝ երաժշտականություն, տեղեկացվածություն, դրդապատճառային, գնահատողական, գործառնական:

Դիտարկված են անձի երաժշտական ընդունակությունների զարգացման, երաժշտական ընկալման, ճաշակի վերաբերյալ երաժշտագետ մանկավարժների տեսական և հայեցակարգային մոտեցումները:

Վերլուծված և բնութագրված են երաժշտության նկատմամբ կրտսեր դպրոցականների գեղագիտական հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները:

Բնութագրված է կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության ձևավորման ընթացքը և մակարդակները: Երաժշտական մտածողությունը ստեղծագործական բնույթ ունի և առանցքային է գործունեության տարբեր ձևերում ու տեսակներում:

Նշվում է, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին պետք է աստիճանաբար պատկերացում տալ երաժշտության մասին, նպաստել նախնական պատկերացումների ձևավորմանը, երաժշտական արտահայտչամիջոցների հնարավորությունների գիտակցմանը:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթը մեր կողմից ըմբռնվում է որպես անձի համակարգված, նպատակաուղղված դաստիարակության և ուսուցման գործընթացում ձևավորվող ամբողջական հատկանիշ, որի բովանդակությունը կազմում է երաժշտության նկատմամբ արժեքային հարաբերության գիտակցումը, ինչն էլ արտահայտվում է նրա գեղեցկության ընկալմամբ, այն լսելու և ըմբոշխնելու պահանջմունքով և երաժշտական ստեղծագործությունների նախնական գնահատմամբ:

Հիմնավորվել է, որ անձի երաժշտական մշակույթի զարգացումը նրա մշակույթի ձևավորման նախադրյալն է: Ելնելով երաժշտական մշակույթի կառուցվածքից՝ մենք առանձնացնում ենք երաժշտական մշակույթի ձևավորման հետևյալ ոլորտները՝ երաժշտականության, դրդապատճառային, տեղեկատվական, գործունային, գնահատման, արժևորման, իմաստավորման և այլն:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթը գեղագիտական

ուղղվածություն ունի և ներառում է ստեղծագործական գործունեության նկատմամբ հուզական-գնահատողական վերաբերմունքը:

Երաժշտական մշակույթի ձևավորումն ու զարգացումն իրականանում է ոչ միանգամից, այլ աստիճանաբար, անցնում է որոշակի փուլերով, որոնք հստակ սահմանազատված չեն միմյանցից:

Երրորդ՝ «Անձի երաժշտական մշակույթի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը հայ մանկավարժների հայացքներում և հանրակրթության նորմատիվային փաստաթղթերում» ենթագլխում դիտարկված է անձի երաժշտական մշակույթի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը հայ մանկավարժների հայացքներում և հանրակրթության նորմատիվային փաստաթղթերում:

Հիմնավորված է, որ հայկական երաժշտական արվեստի ակունքները ձգվում են մինչև հազարամյակների խորքը: Երաժշտության դերը կարևորվել է սկսած դեռևս է վաղ քրիստոնեական շրջանից:

Անձի երաժշտական մշակույթի ձևավորման խնդիրը մշտապես եղել է հայ մակավարժների ուշադրության կենտրոնում: Այդ խնդիրը արծարծվել է նաև հետագայում հայ մանկավարժական շատ ներկայացուցիչների աշխատություն-ներում:

Երեխայի երաժշտական մշակույթի ձևավորումը նպատակաուղղված, համակարգված ու ղեկավարվող գործընթաց է, որի նպատակն է զարգացնել նրա երաժշտական ունակությունները, կարողություններն ու հմտությունները, երաժշտական ճաշակը, երաժշտությունը հուզականորեն ընկալելու մշակույթը: Անձի երաժշտական մշակույթի ձևավորումը սկսվում է վաղ տարիքից, այդ գործում մեծ է ընտանիքի, հատկապես մոր դերը:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխայի երաժշտական մշակույթի ձևավորմանը նպաստում են երաժշտական այն անհրաժեշտ գիտելիքները, որոնք զարգացնում են նրանց երաժշտական ընդունակությունները:

Անձի երաժշտական մշակույթի ձևավորման խնդիրը լայնորեն արծարծված է կրթության մասին ՀՀ օրենսդրային և նորմատիվային փաստաթղթերում:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից մեր կողմից կարևորվում է տարրական դպրոցի աշակերտների գիտելիքների համակարգի, կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորումը «Արվեստ» ուսումնական բնագավառի առարկաների յուրացման արդյունքում: Այսպես՝ տարրական դպրոցի աշակերտը պետք է նախնական պատկերացում ունենա երաժշտության մասին, հասկանա դրա յուրահատուկ լեզուն և արտահայտչամիջոցները, իմանա որոշ եզրույթներ, բնութագրի ժանրերը, պատկերացում ունենա տարբեր ժանրերում ստեղծագործող արվեստագետների և նրանց ստեղծագործությունների մասին:

Չորրորդ ենթագլխում բացահայտված և բնութագրված են ժողովրդական ավանդույթների վրա հիմնված կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի՝ զարգացման առանձնահատկությունները:

Հիմնավորվում է, որ ներկայումս ավելի ու ավելի է կարևորում ժողովրդական մանկավարժության ավանդույթների դերն ու հնարավորությունն աճող սերնդի դաստիարակության գործում:

Ժողովրդական ավանդույթները աճող սերնդի սոցիալական վարքի արդյունավետ կարգավորիչներ են և արտացոլում են տվյալ ժողովրդի հոգեկերտվածքը, բարոյական նկարագիրը: Յուրաքանչյուր ազգ ավանդույթների միջոցով է գնահատում իրականությունը, ավանդույթներում են արտացոլված ժողովրդի պատմությունը, ազգային ինքնագիտակցությունը: Ավանդույթները դիտարկվում են որպես մշակութային փուլերի՝ կայուն, սերնդեսերունդ կրկնվող և ամրապնդվող կապեր, որոնք գործում են որպես մշակութային մի մակարդակից մյուսին անցման մշակութային ժառանգության ձև և միջոց:

Վերջին տասնամյակում գիտական հետազոտություններում առկա են տեսական և գործնական նշանակություն ունեցող այնպիսի տեսակետներ, որոնցում դիտարկվում են տարրական կրթության համակարգում ժողովրդական ավանդույթների դերի ու նշանակության, էթնոմանկավարժության գործառույթների (կրթական, իմացական-ճանաչողական, գնահատողական և այլն) հարցերը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի տեսանկյունից: Դա ազգային ինքնագիտակցության և ժողովրդական ավանդույթների նկատմամբ հուզական-գեղագիտական հարաբերությունների զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում:

Մեր հետազոտության մեջ մենք շեշտադրում ենք ժողովրդական մանկավարժության ավանդույթները՝ որպես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի զարգացման հիմնական միջոց: Երաժշտության դասերի ընթացքում ժողովրդական երաժշտության օգտագործումը՝ որպես ժողովրդի երաժշտական ավանդույթների արտահայտություն, ոչ միայն ուսուցողական, այլև դաստիարակչական մեծ նշանակություն ունի: Ահա թե ինչու ժողովրդի երաժշտական ավանդույթների վրա հիմնված դաստիարակությունը՝ իր հուզական ներգործությամբ, բարոյական ներուժով, անհրաժեշտ է երեխայի անձի երաժշտական մշակույթի զարգացման համար:

Ժողովրդական երգերը, հեքիաթները, առած-ասացվածքները, ավանդազրուցները, լեգենդները գեղարվեստական-գեղագիտական մեծ պաշար ունեն և կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի ձևավորման ու զարգացման համար հարուստ նյութ են տրամադրում: Դրանք երեխաների ստեղծագործական երևակայության, զարգացման ընդունակությունների բացահայտման անփոխարինելի միջոցներ են:

Երաժշտական արվեստի ակունքները գտնվում են ժողովրդական երգարվեստի մեջ: Ժողովրդի երաժշտական մշակույթը անձի երաժշտական դաստիարակության և երաժշտական մշակույթի ձևավորման հզոր միջոց է: Ահա թե ինչու ժամանակի հրամայականն է կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին հասու դարձնել ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերին և ժողովրդի մշակութային ավանդույթներին:

Ատենախոսության «**Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի բովանդակությունն ու իրականացման տեխնոլոգիաները**» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի զարգացման մոդելը» խորագրով ենթագլխում տրված է քննարկվող հիմնախնդրին վերաբերող գիտահետազոտական գրականության տեսական վերլուծությունը: Տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում ժողովրդական արվեստի ու ավանդույթների ներդրման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ հիմնախնդիրը արդիական է և ներկայումս ոչ բավարար չափով է մշակված: Վերլուծությունը թույլ տվեց որոշակիացնել այն հիմնական մոտեցումները, հայեցակարգային դրույթները, գաղափարները, օրինաչափությունները, առանձնահատկություններն ու սկզբունքները, որոնք կազմում են փորձարարական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանական հիմքը:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման սկզբունքները:

Առանձնացված են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման օրինաչափությունները:

Հիմնավորվում է, որ սովորողների գեղագիտական-գեղարվեստական կրթության և դաստիարակության գործում նշանակալի դեր է վերապահված ժողովրդական երգարվեստին նրանց հաղորդակցմանը:

Բնութագրված են երաժշտական մշակույթի ձևավորվածության չափանիշները, ցուցանիշները և բնորոշ հայտանիշները: Ներկայացված են հավաստող գիտափորձի խնդիրները, ատենախոսի կողմից գիտափորձի ընթացքում մշակված և փորձարկված ծրագրերի նպատակը, բովանդակությունը:

Երկրորդ՝ «Գիտափորձի անցկացման մեթոդիկան» խորագրով ենթագլխում բնութագրված է գիտափորձի անցկացման մեթոդիկան, հարցաթերթիկների բովանդակությունը: Տրվում է հանրակրթական դպրոցում առկա մանկավարժական այն պայմանների վերլուծությունը, որոնք նպաստում են երեխաների երաժշտական մշակույթի զարգացմանը:

Երաժշտական դաստիարակության ծրագրի վերլուծության ընթացքում դիտարկվել են հետևյալ ցուցիչները՝

- ծրագրի բովանդակությունը կազմող այն էական բաղադրատարրերը, որոնք ապահովում են երեխաների երաժշտական մշակույթի զարգացումը,
- երաժշտական մշակույթի զարգացմանն ուղղված ծրագրի և ուսումնական այլ առարկաների ծրագրերի բովանդակության նպատակային միասնության առկայություն:

Հետազոտվող հիմնախնդրին առնչվող աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղագիտական-մշակութային միջավայրի բովանդակությունը տակավին մնում է միօրինակ, երեխայի երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի արդյունավետությունը բավականաչափ մեծ չէ: Դասավանդողները ոչ միշտ է, որ հստակ պատկերացնում են երաժշտական մշակույթի բովանդակության, ձևերի, սովորողների մեջ երաժշտական մշակույթի զարգացման միջոցների մասին:

Գիտափորձի երկրորդ փուլում բացահայտվել են ընտանեկան պայմաններում երաժշտական մշակույթի զարգացման հիմնական միջոցներն

ու մոտեցումները:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ընտանեկան միջավայրում ծնողների և երեխաների հիմնական նախասիրությունն է ժամանակակից էստրադային երաժշտությունը, որը և հետագայում երեխայի կողմից ստեղծագործության ինքնուրույն ընկալման համար արժեքային կողմնորոշիչ է:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ծնողների մեծ մասը ուշադրություն է հատկացնում երեխաների երաժշտական դաստիարակությանը, սակայն անհրաժեշտ նշանակություն չի տալիս երաժշտական-գեղագիտական զարգացնող միջավայրի ձևավորմանը, միջավայր, որտեղ գերակայում է բարձր արվեստը: Երեխաները հնարավորություն չեն ունենում ժողովրդական արվեստի ստեղծագործությունների լիարժեք ընկալման փորձ կատարել: Բարձր արվեստի և գեղեցիկի չափանիշների նկատմամբ նրանց արժեքային վերաբերմունքը և պատկերացումները հաճախ ձևավորվում են այնպիսի երաժշտության հիման վրա, որը գեղարվեստական բարձր արժեք չի ներկայացնում: Երաժշտական դաստիարակության և երաժշտական մշակույթի զարգացման մասին ծնողների պատկերացումները սահմանափակվում են լոկ պրակտիկ կարողությունների և հմտությունների զարգացմամբ: Մեր կողմից անցկացված հարցման արդյունքները առավել ևս շեշտում են երեխաների երաժշտական մշակույթի զարգացման արդիականությունն ու կարևորությունը:

Գիտափորձի երրորդ՝ ախտորոշիչ փուլում բացահայտվել են կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մակարդակները:

Անցկացվել են նաև անհատական ուսումնասիրություններ. երեխաներին առաջարկվել է ունկնդրել հատվածներ երաժշտական ստեղծագործություններից և պատասխանել հարցերին:

Հետազոտության ախտորոշիչ փուլում հանձնարարվել են երկու թեստային առաջադրանքներ:

Առաջադրանքների կատարման արդյունքում մենք բացահայտեցինք կրտսեր դպրոցականների երաժշտական-գեղագիտական գիտակցության զարգացման մակարդակները:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների երաժշտական-գեղագիտական գիտակցության ձևավորվածության մակարդակի, երաժշտական ընդունակությունների և երաժշտական մշակույթի զարգացման ցուցանիշները:

Ախտորոշիչ գիտափորձի երկրորդ փուլում անցկացվել է հետազոտություն, որի ընթացքում բացահայտվել է դպրոցականների լադային զգացողողության, երաժշտական-լսողական պատկերացումների և ռիթմի զգացողության ձևավորվածության մակարդակը:

Այս չափանիշներին համապատասխան՝ առանձնացվել է կրտսեր դպրոցականների երաժշտական ընդունակությունների զարգացման երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր: Այդ մակարդակները բնութագրված են աղյուսակներում:

Հետազոտության հաստատող փուլը հնարավորություն տվեց բացահայտել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքների վիճակը հանրակրթական դպրոցում,

որոշել դպրոցում երաժշտական-գեղագիտական միջավայրի ձևավորման առանձնահատկությունները, հետազոտել ծնողների վերաբերմունքը երեխաների երաժշտական մշակույթի ձևավորման խնդրի վերաբերյալ, բացահայտել ժողովրդական ավանդույթների օգտագործման արդյունավետությունը այդ գործընթացում, որոշել դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մակարդակը:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացմանն ուղղված միջոցների, ուղիների ու մեթոդների վերլուծությունը ցույց տվեց, որ դպրոցում երաժշտական-գեղագիտական միջավայրը բավարար չափով ձևավորված չէ, և այդ գործընթացում դեռևս շատ անելիքներ կան: Հաճախ դասավանդողները ոչ այնքան հստակ են պատկերացնում երեխաների երաժշտական մշակույթի բովանդակության, նրա զարգացման ուղիների ու միջոցների մասին: Ժողովրդի հոգևոր հարուստ ժառանգության վերաբերյալ գիտելիքների, ընդհանուր մշակույթի մակարդակը դեռևս ցածր է:

Երրորդ ենթագլխում ներկայացված է կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման ձևերը, մեթոդները, ուղիներն ու միջոցները:

Գիտափորձի ընթացքում մեր կողմից իրականացել է կրտսեր դպրոցականների իմացական-ճանաչողական կարողությունները զարգացնող գործընթաց, որը ներառում է աշխատանքի բազմաբնույթ ձևեր ու միջոցներ՝ ստեղծագործական առաջադրանքներ, հուզական-գնահատողական իրավիճակներ, կոլեկտիվ և անհատական ստեղծագործական գործունեություն: Ձևավորող գիտափորձը ցույց տվեց, որ անձի երաժշտական մշակույթի ձևավորումը իրականանում է ստեղծագործական գործունեության ընթացքում երաժշտության ակտիվ ընկալման ունակության զարգացման ուղիով:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման խնդիրների լուծման համար մեր կողմից օգտագործվել է տեղեկատվական-որոնողական, հակադրությունների համադրման, երաժշտական խորհրդածությունների, իմաստավորված ունկնդրման, ներշնչանքի ու ապրումների արթնացման, անցյալի ավանդույթներին վերադառնալու մեթոդների համակարգը:

Մեր կողմից մշակվել են այս մեթոդների արդյունավետ օգտագործման պայմանները՝

- մանկավարժը անպայման պետք է ներգրավվի հուզական իրավիճակում, համապատասխան հուզական-գեղագիտական միջավայր ստեղծի, քանի որ գեղարվեստական-գեղագիտական իրադրությունը ձևավորվում է հուզական ապրումների վրա,
- պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականների անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և հուզական-զգայական ոլորտը,
- տեղեկատվությունը պետք է նորություն պարունակի, մատչելի ու գրավիչ լինի և մատուցվի գեղագիտական տեսանկյունից:

Ձևավորող գիտափորձի տվյալները ցույց տվեցին, որ կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի ձևավորումն իրականանում է

ստեղծագործական գործունեության ընթացքում երաժշտության ակտիվ ընկալման զարգացման ուղիով:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման ուղղությամբ մեր կողմից առաջարկվում է ուսումնական շաբաթական մեկժամյա դասաժամերին զուգընթաց անցկացնել 25 նախասիրական պարապմունքներից բաղկացած ցիկլ (յուրաքանչյուրը 20-30 րոպե տևողությամբ): Յուրաքանչյուր պարապմունքի համար առաջադրվել է որոշակի նպատակ:

Մեր կողմից որոշվել են նաև այդ աշխատանքների կազմակերպման փուլերը:

Մեր կողմից առաջարկվել է կրտսեր դպրոցականներին ժողովրդական բանահյուսական նյութերին ծանոթացնելու մեթոդները:

Ներկայացված են երեխաների երաժշտական մշակույթի ձևավորման աշխատանքների ձևեր, մեթոդներ, եղանակներ, խաղեր, զրույցներ, բանավեճերի թեմաներ:

Պարապմունքների ընթացքում կարևորվել է նաև երեխաների երաժշտական լսողության զարգացման խնդիրները: Մարդու երաժշտական լսողությունը կապվում է նրա էթնիկ ակունքների, ազգային երգարվեստի առանձնահատկությունների հետ: Ներկայացված են արապմունքերի ընթացքում օգտագործված վարժությունները:

Հիմնավորվում է երեխաների երաժշտական դաստիարակության գործում բոլոր ժամանակներում կարևորվել են խաղերը, որոնք նաև ֆիզիկական, բարոյական, գեղագիտական դաստիարակության միջոց են: Երաժշտական տպավորություններն արտահայտվում են նաև խաղերի միջոցով:

Ներկայացված են և մեր կողմից մշակված կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մանակվարժական պայմանները, որոնք փորձարկվել են գիտափորձի ընթացքում:

Փորձարարական աշխատանքների արդյունքների խոր վերլուծությունը թույլ տվեց կազմակերպել կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացը և մշակել մեթոդական հանձնարարականներ:

Ստացված տվյալների համաձայն՝ կազմվել են կրտսեր դպրոցականների երաժշտական ընդունակությունների զարգացման և երաժշտական-գեղագիտական գիտակցության ձևավորման ցուցանիշների ամփոփիչ աղյուսակներ: Կրտսեր դպրոցականի երաժշտական-գեղագիտական մշակույթի զարգացման՝ մեր կողմից մշակված մեթոդիկայի կիրառումը թույլ տվեց մեր հետազոտության ձևավորող փուլում բացահայտել մեր կողմից անցկացված գիտափորձի արդյունքների դինամիկան:

Ստացված տվյալների որակական վերլուծությունը թույլ է տալիս նշել գիտափորձի հաստատող փուլում կրտսեր դպրոցականների երաժշտական-գեղագիտական գիտակցության զարգացման միջին և ցածր մակարդակների գերակշռությունը և հետևյալ ցուցանիշները՝ երաժշտական ստեղծագործության բովանդակությունը լիովին ընկալելու ոչ բավարար ունակության, ստեղծագործության բնույթին ոչ համարժեք ապրումներ, դատողությունների և գնահատումների անբավարար հիմնավորվածության,

երաժշտական ստեղծագործության ձևի ու բովանդակության ոչ լիարժեք ըմբռնում: Նրանք դժվարանում են գնահատել երաժշտական ստեղծագործության գեղարվեստական արժանիքները, վերլուծել, համեմատել, համադրել, ընդհանրացնել և այլն:

Հետազոտության ստուգողական փուլում փորձարարական խմբերում ցուցանիշները էապես փոխված են. դպրոցականներն ի վիճակի են ընկալել երաժշտությունը, բավականաչափ համարժեք հուզականորեն են վերարտադրում ստեղծագործության բովանդակությունը, երաժշտության վերաբերյալ ունեն իմացական որոշակի կարողություններ, կարողանում են ընտրություն կատարել, դրսևորում են գեղագիտական ճաշակ: Ստոգողական խմբերում ևս որոշակի դրական դինամիկա է նկատվում, այնուհանդերձ փոփոխություններն այնքան էլ նշանակալի չեն փորձարարական խմբերում արձանագրված արդյունքների համեմատությամբ:

Այսպիսով՝ նպատակաուղղված և մեթոդապես ճիշտ կազմակերպված գիտափորձի արդյունքում մենք հանգեցինք կրտսեր դպրոցականների երաժշտական-գեղագիտական գիտակցության զարգացման ցուցանիշների բարելավմանը, որը և երաժշտական մշակույթի զարգացման կարևոր գործոն է:

Կրտսեր դպրոցականների երաժշտական ընդունակությունների զարգացման ուսումնասիրության նպատակով մեր կողմից իրականացված մանկավարժական ներգործության արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները, որոնք ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 1

Կրտսեր դպրոցականների երաժշտական ընդունակությունների զարգացման ցուցանիշները հետազոտության փորձարարական և ստուգողական փուլերում

Խումբ / Մակարդակներ	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	հաստատող փուլ	ստուգողական փուլ	հաստատող փուլ	ստուգողական փուլ
Բարձր	5	18	7	10
Միջին	53	65	54	61
Ցածր	42	17	39	29

Աղյուսակի տվյալները վկայում են, որ գիտափորձի հաստատող փուլում փորձարարական խմբի 53 % և ստուգողական խմբի 54 % դպրոցականներ երաժշտական մշակույթի զարգացման միջին ցուցանիշներ ունեն, փոքր թիվ են կազմում բարձր մակարդակ ունեցողները՝ համեմատաբար 5% և 7%: Ցածր մակարդակ ունեն փորձարարական խմբի 42% և ստուգողական խմբի 39% սովորողներ:

Հետազոտության ստուգողական փուլում ստացված արդյունքները ցույց տվեցին ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբերում ընդգրկվածների երաժշտական մշակույթի զարգացման միջին մակարդակ, այնուհանդերձ պատկերը որակապես փոքր-ինչ բարելավվել է փորձարարական խմբում, որտեղ 13 %-ով ավելացել է երաժշտական ընդունակության բարձր մակարդակ ունեցող երեխաների թիվը. ստուգողական խմբում դրական դինամիկան կազմում է ընդամենը 3%: Երաժշտական ընդունակությունների ցածր մակարդակ ունեցող երեխաների թիվը փորձարարական խմբում կրճատվել է մինչև 25%, իսկ ստուգողական խմբում՝ մինչև 10%:

Գիտափորձի հաստատող փուլի արդյունքների վերլուծությունը և ամփոփումը ցույց է տալիս, որ գիտափորձի սկզբում թե՛ փորձարարական և թե՛ ստուգողական խմբերում արձանագրվել է երաժշտական մշակույթի տիրապետման ցածր մակարդակ, սակայն գիտափորձի ընթացքում անցկացված միջոցառումների, պարապմունքների, մանկավարժական ներգործության արդյունավետ միջոցների կիրառման արդյունքում նկատվել է երաժշտական մշակույթի զարգացման բարձր մակարդակ ունեցող դպրոցականների թվի աճ: Այդ դինամիկան արտացոլված է գծանկարներում:

Այսպիսով՝ գիտափորձի սկզբում և վերջում՝ հաստատող և ստուգողական փուլերում ստացված տվյալների համեմատական վերլուծությունը ապացուցեց կրտսեր դպրցականների երաժշտական մշակույթի զարգացման՝ մեր կողմից մշակված մեթոդական համալիրի մանկավարժական պայմանների արդյունավետությունը, նպատակաուղղվածությունն ու գործուն բնույթը:

Հետազոտության ընթացքում մանկավարժական որոնումներն իրականացել են երաժշտական ստեղծագործությունների վերլուծությունների, ունկնդրումների, երաժշտական գործիքներով կատարումների, բեմականացումների, զրույց-բանավեճերի, տարբեր միջոցառումների ընթացքում տեսական-գործնական ընդհանրացումների և մանկավարժահոգեբանական ու երաժշտագիտության բնագավառում առանցքային գաղափարների հիման վրա:

Գիտափորձի ընթացքում մեր կողմից բացահայտվեցին անձի երաժշտական մշակույթի ձևավորման առանձնահատկությունները, ստեղծագործ անհատի կայացման պայմանները: Գիտափորձը ցույց տվեց, որ ժողովրդի առաջադիմական ավանդույթների վրա հիմնված միջոցներն ու մեթոդները դաստիարակչական հզոր ներուժ են պարունակում, նպաստում են երեխայի սոցիալ-մշակութային զարգացմանը:

Իրականացված աշխատանքների արդյունքները մեր կողմից գնահատվել են ըստ հետևյալ չափանիշների՝ երաժշտական ստեղծագործության բովանդակության շուրջ արտահայտման խորություն և հուզականություն, գնահատողական հիմնավորված դատողություններ, իմպրովիզացիա, երաժշտության վերաբերյալ գիտելիքներ, երաժշտական արտահայտչամիջոցների տիրապետում:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդրի շուրջ գիտահետազոտական

ուսումնասիրությունների տեսական վերլուծությունը և մեր կողմից իրականացված գիտափորձի արդյունքները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. Ժամանակակից աշխարհում տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային խոր տեղաշարժերի պայմաններում անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ուղղված մանկավարժական նոր մոտեցումներ են իրականացնում, որոնց ենթատեքստում պայմաններում արդիական նշանակություն է ձեռք բերում անձի երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդիրը: Անձի երաժշտական մշակույթի զարգացումը համալիր գործընթաց է՝ ուղղված անձնային այնպիսի հատկանիշների զարգացմանը, որոնց բովանդակությունն արտահայտվում է երաժշտության նկատմամբ գիտակցված արժեքային վերաբերմունքի մեջ: Այն դրսևորվում է նաև երաժշտության վեհության ու գեղեցկության ընկալմամբ, բարձրարժեք երաժշտություն լսելու պահանջմունքով:

Անձի երաժշտական մշակույթը նրա հոգևոր մշակույթի կարևոր բաղադրատարրն է: Երաժշտական մշակույթի զարգացման գործընթացում մեծ տեղ են գրավում ժողովրդի մշակութային ավանդույթները, որոնք սերնդեսերունդ փոխանցվող մշակութային ժառանգության ձևեր ու միջոցներ են, սերունդների հոգևոր հիշողության արտահայտությունը:

2. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները խարսխվում են ժողովրդայնության, երաժշտության և կյանքի սերտ կապի, բնության հետ ներդաշնակ կեցության, կյանքի գեղագիտական ընկալման, հուզականության, մշակութահարմարության սկզբունքների վրա և ներառում են չորս հիմնական բաղադրատարրեր՝ երաժշտական գործունեություն, երաժշտական մտածողություն, երաժշտական ընդունակություններ և երաժշտական-գեղագիտական գիտակցություն: Երաժշտական մշակույթի զարգացման գործընթացն իրականանում է երեք հիմնական փուլերով՝ նախապատրաստական, բովանդակային-գործունային և ամփոփող-գնահատողական, որոնք ապահովում են երաժշտության նկատմամբ կրտսեր դպրոցականների հուզական-գնահատողական վերաբերմունքի ձևավորման դինամիկան՝ հուզական ընկալումից մինչև հուզական-իմացական, ճանաչողական-ստեղծագործական բնույթի գնահատում:

3. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովվում է հետևյալ մանկավարժական պայմանների շնորհիվ՝

- երեխաների ակտիվ հաղորդակցումը ժողովրդի երաժշտական ավանդույթներին, որոնցում ներդաշնակորեն համադրվում են բանաստեղծական խոսքը, բովանդակությունն ու երաժշտական-խաղային բնույթը,
- գեղագիտական-դաստիարակչական միջավայրի ստեղծումը, որն իր բովանդակության մեջ ներառում է երաժշտական մշակույթի բաղադրատարրերը, մարդասիրական, մշակութաբանական, էթնոմանկավարժական, անձնակողմնորոշիչ մոտեցումներ, ուսուցման ու դաստիարակության ակտիվ ձևեր ու մեթոդներ,

- տարրական դպրոցի, արտադպրոցական մանկական հաստատությունների և ընտանիքի սերտ համագործակցություն, որն ուղղված է կրտսեր դպրոցականների երաժշտական ճաշակի ձևավորմանը, հուզական ոլորտի հարստացմանը, ժողովրդի ավանդույթների նկատմամբ հետաքրքրության խթանմանը:

4. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման չափանիշների ու մակարդակների առանձնացումը, մեր կողմից իրականացված գիտափորձը և մշակված մեթոդական համալիրի արդյունավետ կիրառումը թույլ տվեցին բացահայտել երաժշտական մշակույթի զարգացման դրական դինամիկա:

5. Կրտսեր դպրոցականներ երաժշտական մշակույթի զարգացման կարևոր գործոն են ընտանիքում երեխայի անձի հոգևոր ներաշխարհի ձևավորման և զարգացման համար բոլոր պայմանների ստեղծումը, գեղագիտական համակողմանի դաստիարակությունը և դպրոցի ու ընտանիքի միասնական մոտեցումը այդ խնդրին:

Հավակնություն չունենալով ամբողջութամբ հետազոտված համարել կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդիրը՝ այնուամենայնիվ այն համոզմանն ենք, որ մեր ուսումնասիրությունը անձի երաժշտական մշակույթի զարգացման բնագավառում կարող է հետագա խոր ուսումնասիրությունների և ստեղծագործական որոնումների հիմք հանդիսանալ: Հիմնավոր ուսումնասի-ության կարիք ունեն հատկապես այն հարցերը, որոնք վերաբերում են երեխայի երաժշտական-գեղագիտական մշակույթի զարգացմանը ընտանիքում, արտադպրոցական հաստատություններում, ինչպես նաև երաժշտական մշակույթի զարգացման տեխնոլոգիաներին և բովանդակության արդիականացման խնդիրներին: Հիմնախնդրի հեռանկարային զարգացումը ենթադրում է մանկավարժական բուհի կրթական համակարգում հատուկ դասընթացի ներմուծումը կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման գործընթացում բարձրորակ մասնագետների պատրաստման համար:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին ժողովրդական երգարվեստով կրթելու ու դաստիարակելու առանձնահատկությունների մասին: «Օրենք և իրականություն» գիտական հանդես, N11 (145), նոյեմբեր, 2007թ. էջ 33-35:
2. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացման ուղիներն ու միջոցները: «Արտագերս» հրատ., Եր., 2009թ. 114 էջ:
3. Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի զարգացումը երաժշտության ուսուցման գործընթացում: «Մանկավարժական միտք» գիտական հանդես, Եր.,«Զանգակ-97» հրատ., N3-4 2010թ. էջ 26-30:

МАНУКЯН ЭЛЕН ЮРЬЕВНА

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ И ПЕДАГОГИЧЕСКИХ УСЛОВИЙ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандитата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.
Защита диссертации состоится 2-го мая 2013г. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК «Педогогика» по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу : 375010 г. Ереван. ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Кардинальные политические и экономические изменения, происходящие в обществе в настоящее время, оставляют свое глубокое воздействие на внутренний мир личности: первичными становятся задача многостороннего и гармоничного развития личности, формирования системы духовно-моральных ценностей. Одной из существенных сторон формирования внутреннего духовного мира личности в младшие школьные годы, является развитие ее музыкальной культуры.

Актуальность проблемы развития музыкальной культуры младших школьников обусловлена необходимостью пересмотра имеющихся подходов в сфере музыкального воспитания личности. Задача развития музыкальной культуры младших школьников в настоящее время приобретает первичное значение в учено-воспитательном процессе начальной школы.

В исследованиях, посвященных изучению музыкальной культуры личности она рассматривается как составляющая часть духовной культуры. Музыкальная культура и музыкальная деятельность формируются в целостном единстве. Музыкальная культура младших школьников – это личностный интегративный признак, который формируется в результате систематизированного, целенаправленного процесса образования и воспитания. Этот подход был рассмотрен в исследованиях Ветлугиной Н.А., Радиновой О.П., Телзаровой Р.А.

Анализируя возможности развития музыкальной культуры личности и сопостажляя их с организацией педагогической деятельности в начальной школе в этом направлении, мы пришли к заключению, что разные подходы в отнишении обсуждаемой проблемы недостаточно внедрены в практику преподования. Современная образовательная система требует разработки и внедрения таких новых педагогических технологий, которые учитывали бы социально-культурное состояние общества и намечали бы новые пути в процессе единого освоения научно-моральных, эстетических и культурологических знаний.

Целью исследования является выявление теоретико-методических основ развития музыкальной культуры личности и обоснование педагогических условий ее осуществления.

В соответствии с представленной целью и версией выдвинуты задачи исследования:

1. Выявить целостность тех исходных положений, которые составляют теоретико-методологическую основу процесса развития музыкальной культуры младших школьников.

2. Выявить и обосновать посредством эксперимента систему эффективных методов, средств, способов и методов развития музыкальной культуры младших школьников, основанной на музыкальных традициях народа.

3. Предложить модель развития музыкальной культуры младших школьников, определить уровни, критерии развития музыкальной культуры.

4. Разработать и обосновать научным опытом комплекс педагогических условий развития музыкальной культуры младших школьников.

Научная новизна исследования:

1. Теоретически обоснована и результатами эксперимента подтверждена необходимость применения народной педагогики и фольклора в деле развития музыкальной культуры младших школьников.

2. Выявлена и научным опытом подтверждена система эффективных форм, методов, средств, путей развития музыкальной культуры младших школьников, которая основана на эстетическом восприятии гуманных идей музыкальных традиций народа, связи между жизнью и музыкой, гармонии с природой, зрелищности, эмоциональности мира.

3. Предложена модель развития музыкальной культуры младших школьников, которая включает три этапа развития музыкальной культуры: подготовительный, содержательно-деятельностный и оценочный.

4. Определены уровни и критерии развития музыкальной культуры младших школьников.

5. Разработан и научным опытом обоснован комплекс педагогических условий, обеспечивающий эффективное развитие музыкальной культуры младших школьников.

Теоретическое значение исследования состоит в том, что разработаны концептуальные основы и теоретическая модель развития музыкальной культуры младших школьников, рассмотрены философские, психо-педагогические, культурологические подходы относительно исследуемой проблемы.

Практическое значение исследования: предложенная нами система средств, методов, путей развития музыкальной культуры младших школьников, диагностические материалы, методические задания об использовании музыкальных традиций народа со стороны педагогов начальной школы могут применяться в процессе образования и воспитания.

Материалы исследования могут применяться также в программах педагогического вуза и средних учебных заведений в качстве специальных курсов, в курсах по повышению квалификации и переквалификации преподавателей музыки, а также во внешкольных заведениях и в практике семейного воспитания.

Исследование осуществлено в три этапа:

Объем и структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка использованной литературы, 134 ст. Работа включает в себя девять таблиц и семь графических рисунков.

ELEN YURY MANUKYAN
THE PECULIARITIES AND PEDAGOGICAL CONDITIONS OF YOUNG LEARNERS' MUSICAL CULTURE DEVELOPMENT

Thesis for degree of candidate of pedagogical sciences

The defence of the thesis will be held on May 2, 2013 at 14^{00} at the session of the Special Board HAC (Higher Attestation Commission) RA 020 "Pedagogy" to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, st. Tigran Mets 17, Yerevan

SUMMARY

The relevance of the research.
The culture of each nation gives to the mankind not only material and spiritual values, but also creates a distinctly developed personality who is the creator of the very culture and meanwhile the result of it. The person's musical education and the musical culture development in this context are aimed, regulated and controlled processes, the aim of which is comprehensively and harmonically brought up person's education, the development of the active and aware listener.
At present the young learners' musical culture development problem is becoming primary in the elementary school educational process.
The aim of the research is to reveal musical culture development of the theoretical-methodological basis and to prove the realization of its pedagogical conditions.
The following objectives are set forth to achieve the goal of the research:

1. To reveal the entity of those points which are the theoretical-methodological basis of young learners' musical culture development process.
2. To reveal and prove with experiment the system of young learners' musical culture development effective ways, means, methods based on the nation's music traditions.
3. To set forth the model of young learners' musical culture development, to find the levels, the criteria of musical culture development.
4. To elaborate and prove with experiment the complex of young learners' musical culture development pedagogical conditions.

The content of the research is reflected on the structure of the thesis, which consists of introduction, two chapters, conclusion, and bibliography. It includes nine tables and seven diagrams.

The scientific innovation of the research:

1. To define and prove by experiment the importance of people's pedagogy and folklore use in young learners' musical culture development process.
2. The system of young learners' musical culture development process beneficial ways, methods and means were revealed and proved by experiment. The system is based on the comprehension of the people's musical traditions, humanitarian ideas, life and music connection, the harmony with nature, observation, emotionality and the world's aesthetics
3. Young learners' musical culture development model was offered. It includes 3 phases of musical culture development: primary, content-productive and evaluative.
4. The levels and criteria of young learners' musical culture development were defined.
5. The pedagogical conditions complex was processed and proved with experiment which provides productivity to young learners' musical culture development.

The theoretical value of the research. The conceptual basis and theoretical model of young learners' musical culture development were elaborated. Philosophical, psycho-pedagogical, culturological approaches were surveyed as well.

The practical value of the research. Young learners' musical culture development means, methods and ways system, diagnostic materials, the methodological tasks on the use of people's musical traditions offered by us can be used by primary school teachers in the educational process.

The research materials can be used in pedagogical university and vocational educational institutions curriculum as special classes, in qualification and training classes for music teachers, in extracurricular institutions and family upbringing practice as well.

The approbation of the research.

The main provisions of the research were discussed at the meetings of the Department of Pedagogy of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. On the topic of the dissertation were published articles.

The basis of the research were Yerevan secondary schools # 1, 6, 47, 114.